

**Հաստատված է**

**Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի  
գիտական խորհրդի 2017թ. հունիսի 08-ի թիվ 25 նիստում**

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. Առաքելյան**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի /այսուհետ ԵՊՀ ԻՄ/ միջազգային կապերի բաժինը /այսուհետ Բաժին/ մասնաճյուղի առանձին կառուցվածքային ծառայություն է և իր գործառնությունները իրականացնում է մասնաճյուղի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և ՀՀ օրենսդրության համապատասխան:

1.2. Բաժինը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվամբ պաշտոնաթուղթ /բլանկ/ և անհատականացման այլ միջոցներ:

**2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության միջոցով Իջևանի մասնաճյուղի միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, դիվանագիտական ներկայացուցչությունների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը, համագործակցության պայմանագրերի նախագծերի, աշխատանքային պլանների կազմումը և իրականացման նկատմամբ վերահսկողությունը, պաշտոնական փաստաթղթերի փոխանակումը և նամակագրության վարումը:

2.2. Օտարերկրյա ուսանողների հավաքագրումը, նրանց անձնական գործերի կազմումը, հաշվառումը, մասնակցությունը նրանց գործընթացի կազմակերպմանը և այլն:

2.3. Մասնաճյուղի դասախոսներին և ուսանողներին միջազգային գիտական /դրամաշնորհային/ ծրագրերում /ներառյալ՝ փոխանակման ծրագրերում/ ներգրավման աշխատանքների կազմակերպումը:

2.4. Մասնաճյուղ ժամանող օտարերկրյա մասնագետների, հյուրերի և պատվիրակությունների հրավերների և նրանց ընդունելության կազմակերպումը:

2.5. Մասնաճյուղի կանոնադրական նպատակներից բխող միջոցառումներին մասնակցելու նպատակով արտասահման մեկնող աշխատողների գործուղումների ձևակերպումը և արտասահման մեկնող սովորողների հրամանագրումը:

2.6. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումներին միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների, բուհերի կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, դրամաշնորհային ծրագրերի փաստաթղթերի պատրաստումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը:

2.7. Մասնաճյուղում դասավանդած, ուսումնառություն կամ ստարժավորում անցած օտարերկրյա քաղաքացիներին ակադեմիական տեղեկանքների, ինչպես նաև նրանց վերաբերյալ ստացված պաշտոնական հարցմամբ պահանջվող այլ տեղեկատվության տրամադրումը, փաստաթղթերի թարգմանությունն ու պաշտոնական վավերացումը:

2.8. Սփյուռքի հայկական բարեգործական կազմակերպությունների կողմից մասնաճյուղում բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին հատկացվող խրախուսական միանվագ կրթաթոշակների բաշխումն ու դրա վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների ներկայացումը:

2.9. Իրականացնում է իր իրավասություններին վերաբերող տեղեկատվական նյութերի տպագրում, հայտարարությունների կազմում:

2.10. Բաժնի գործունեությունից բխող այլ խնդիրների իրականացումը:

### **3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

3.1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի միջազգային կապերի բաժնի անմիջական համակարգումը իրականացնում է մասնաճյուղի տնօրենը:

3.2. Բաժնի կառավարումը իրականացնում է բաժնի վարիչը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մասնաճյուղի տնօրենը:

### **3.3. Բաժնի վարիչը՝**

3.3.1. Կազմակերպում և վերահսկում է բաժնի գործունեությունը, ապահովում է բաժնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները:

3.3.2. Համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս ենթակա աշխատողներին:

3.3.3. Սահմանված կարգով տնօրինում է բաժնին հատկացված ֆինանսական միջոցները:

3.3.4. Ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին:

3.3.5. Ստորագրում է բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը:

3.3.6. Ներկայացնում է բաժինը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, բաժնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում:

3.3.7. Պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

3.3.8. Լուծում է բաժնի կանոնադրությունից բխող և բաժնի գործունեության հետ կապված այլ հարցեր:

### **4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջազգային կապերի բաժնի վերակազմակերպումը կամ լուծարումը իրականացվում է մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

4.2. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից՝ մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

**Հաստատված է**

**Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի  
գիտական խորհրդի 2017թ. հունիսի 08-ի թիվ 25 նիստում**

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. Առաքելյան**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի /այսուհետ ԵՊՀ ԻՄ/ միջազգային կապերի բաժինը /այսուհետ Բաժին/ մասնաճյուղի առանձին կառուցվածքային ծառայություն է և իր գործառնությունները իրականացնում է մասնաճյուղի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և ՀՀ օրենսդրության համապատասխան:

1.2. Բաժինը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվամբ պաշտոնաթուղթ /բլանկ/ և անհատականացման այլ միջոցներ:

**2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության միջոցով Իջևանի մասնաճյուղի միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, դիվանագիտական ներկայացուցչությունների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը, համագործակցության պայմանագրերի նախագծերի, աշխատանքային պլանների կազմումը և իրականացման նկատմամբ վերահսկողությունը, պաշտոնական փաստաթղթերի փոխանակումը և նամակագրության վարումը:

2.2. Օտարերկրյա ուսանողների հավաքագրումը, նրանց անձնական գործերի կազմումը, հաշվառումը, մասնակցությունը նրանց գործընթացի կազմակերպմանը և այլն:

2.3. Մասնաճյուղի դասախոսներին և ուսանողներին միջազգային գիտական /դրամաշնորհային/ ծրագրերում /ներառյալ՝ փոխանակման ծրագրերում/ ներգրավման աշխատանքների կազմակերպումը:

2.4. Մասնաճյուղ ժամանող օտարերկրյա մասնագետների, հյուրերի և պատվիրակությունների հրավերների և նրանց ընդունելության կազմակերպումը:

2.5. Մասնաճյուղի կանոնադրական նպատակներից բխող միջոցառումներին մասնակցելու նպատակով արտասահման մեկնող աշխատողների գործուղումների ձևակերպումը և արտասահման մեկնող սովորողների հրամանագրումը:

2.6. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումներին միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների, բուհերի կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, դրամաշնորհային ծրագրերի փաստաթղթերի պատրաստումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը:

2.7. Մասնաճյուղում դասավանդած, ուսումնառություն կամ ստարժավորում անցած օտարերկրյա քաղաքացիներին ակադեմիական տեղեկանքների, ինչպես նաև նրանց վերաբերյալ ստացված պաշտոնական հարցմամբ պահանջվող այլ տեղեկատվության տրամադրումը, փաստաթղթերի թարգմանությունն ու պաշտոնական վավերացումը:

2.8. Սփյուռքի հայկական բարեգործական կազմակերպությունների կողմից մասնաճյուղում բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին հատկացվող խրախուսական միանվագ կրթաթոշակների բաշխումն ու դրա վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների ներկայացումը:

2.9. Իրականացնում է իր իրավասություններին վերաբերող տեղեկատվական նյութերի տպագրում, հայտարարությունների կազմում:

2.10. Բաժնի գործունեությունից բխող այլ խնդիրների իրականացումը:

### **3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

3.1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի միջազգային կապերի բաժնի անմիջական համակարգումը իրականացնում է մասնաճյուղի տնօրենը:

3.2. Բաժնի կառավարումը իրականացնում է բաժնի վարիչը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մասնաճյուղի տնօրենը:

### **3.3. Բաժնի վարիչը՝**

3.3.1. Կազմակերպում և վերահսկում է բաժնի գործունեությունը, ապահովում է բաժնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները:

3.3.2. Համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս ենթակա աշխատողներին:

3.3.3. Սահմանված կարգով տնօրինում է բաժնին հատկացված ֆինանսական միջոցները:

3.3.4. Ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին:

3.3.5. Ստորագրում է բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը:

3.3.6. Ներկայացնում է բաժինը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, բաժնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում:

3.3.7. Պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

3.3.8. Լուծում է բաժնի կանոնադրությունից բխող և բաժնի գործունեության հետ կապված այլ հարցեր:

### **4. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջազգային կապերի բաժնի վերակազմակերպումը կամ լուծարումը իրականացվում է մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

4.2. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից՝ մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: